Վալպրոաթթու պարունակող դեղեր օգտագործող, վերարտադրողականության պոտենցիալ ունեցող տղամարդկանց համար նախատեսված գրքույկ

Կարդացեք այս գրքույկը, ինչպես նաև դեղի տուփում տեղադրված ներդիր-թերթիկը:

Վալպրաթթու պարունակող դեղեր օգտագործող, վերարտադրողականության պոտենցիալ ունեցող տղամարդկանց համար նախատեսված գրքույկ

Ի՞նչ պետք է իմանաք

Այս գրքույկը նախատեսված է վալպրոաթթու պարունակող ցանկացած դեղ օգտագործող տղամարդկանց համար: Այն պարունակում է երեխայի բեղմնավորման ժամանակ վալպրոաթթու պարունակող դեղերի օգտագործման պոտենցիալ ռիսկի վերաբերյալ հիմնական տեղեկություններ:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք դրանք քննարկել ձեր բժշկի կամ դեղագետի հետ:

ՊԱՀՊԱՆԵՔ ԱՅՍ ԳՐՔՈՒՅԿԸ, ՀՆԱՐԱՎՈՐ Է՝ ԱՅՆ ՎԵՐԸՆԹԵՐՑԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱՔ:

VV-PV-0594980

1 Որո՞նք են վալպրոաթթու պարունակող դեղերի օգտագործման ռիսկերը երեխա պլանավորելիս:

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ այն երեխաների շրջանում, որոնց տղամարդ ծնողը բեղմնավորման ժամանակ բուժվել է վալպրոաթթու պարունակող դեղերով, մտավոր և/կամ շարժողական զարգացման խանգարման ռիսկը ավելի բարձր է, քան այն երեխաների շրջանում, որոնց տղամարդ ծնողն օգտագործել է լամոտրիջին, լևետիրացետամ կամ այլ դեղեր, որոնք կարող են օգտագործվել հիվանդության բուժման համար:

Այս առումով, եթե ձեր երեխայի բեղմնավորումը տեղի է ունեցել վալպրոաթթու պարունակող դեղերով բուժման ընթացքում, չի կարելի բացառել երեխայի մտավոր և/կամ շարժողական զարգացման խանգարման ռիսկը:

2 Ի՞նչ է սա նշանակում ձեզ համար:

Որպես նախազգուշական միջոց՝ Ձեր բժիշկը Ձեզ (և/կամ Ձեր ծնողների/խնամակալի) հետ կքննարկի հետևյալ հարցերը.

- **վալպրոաթթու պարունակող դեղերով բուժման ընթացքում բեղմնավորված երեխայի համար պոտենցիալ ռիսկը:**
- **Ձեզ հասանելի այլընտրանքային բուժման տարբերակները:**
- **Հակաբեղմնավորման արդյունավետ մեթոդների օգտագործման անհրաժեշտությունը:**

Դեղի առաջին նշանակման ժամանակ և տարեկան այցի ընթացքում, Դուք և Ձեր բժիշկը կօգտագործեք ռիսկերի վերաբերյալ տեղեկացված համաձայնության տարեկան լրացվող ձևաթուղթը: Սա անհրաժեշտ է, որպեսզի Դուք տեղեկանաք երեխա բեղմնավորելիս վալպրոաթթու պարունակող դեղերի օգտագործման հետ կապված ռիսկերի վերաբերյալ:

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵՔ ԴԵՂԻ ՆԵՐԴԻՐ-ԹԵՐԹԻԿԸ՝ ԱՎԵԼԻ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ: